ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 2-Լ

«07» 01 2025թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 9-Ի N 3-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ գլխավոր դատախազի՝ «Սյունիքի կայազորի զինվորական դատախազության, Թիվ 1 կայազորի զինվորական դատախազության, Թիվ 2 կայազորի զինվորական դատախազության, ինչպես նաև նշված դատախազությունների տարածքային բաժինների անվանումները փոփոխելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի հրամաններում և հանձնարարականներում փոփոխություններ կատարելու մասին» 2025 թվականի հունվարի 7-ի հրամանը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության և Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազության կառուցվածքը հաստատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2019 թվականի սեպտեմբերի 25-ի N 41 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2024 թվականի հունվարի 9-ի N 3-Լ հրամանի (այսուհետ՝ Հրաման) 2-րդ հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Հրամանի 3-րդ հավելվածի 43-50-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«43. Երևանի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին,

44. Շիրակի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին,

45. Լոռու կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին,

46. Տավուշի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին,

47. Արարատի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին,

48. Գեղարքունիքի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին,

49. Սիսիանի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին,

50. Կապանի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին:»:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանի կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

5. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Հավելված
ՀՀ գլխավոր դատախազի
«07» 01 2025թ.
N2-L հրամանի

«Հավելված N 2
ՀՀ գլխավոր դատախազի
«09» 01 2024թ.
N 3-L հրամանի

ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ

1. **Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունը կազմված է՝**

1) Զինվորական կենտրոնական դատախազությունից,
2) Երևանի կայազորի զինվորական դատախազությունից,
3) Շիրակի կայազորի զինվորական դատախազությունից,
4) Լոռու կայազորի զինվորական դատախազությունից,
5) Տավուշի կայազորի զինվորական դատախազությունից,
6) Արարատի կայազորի զինվորական դատախազությունից,
7) Գեղարքունիքի կայազորի զինվորական դատախազությունից,
8) Սիսիանի կայազորի զինվորական դատախազությունից,
9) Կապանի կայազորի զինվորական դատախազությունից:

2. **Զինվորական կենտրոնական դատախազությունը կազմված է զինվորական դատախազի տեղակալներից, զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազներից և դատախազներից, զինվորական կենտրոնական դատախազության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներից, ներառյալ՝**

1) Կայազորների զինվորական դատախազությունների գործունեության նկատմամբ վերահսկողության բաժին,

2) Զինվորական ծառայության դեմ ուղղված հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության բաժին,

3) Պետական շահերի պաշտպանության բաժին:»: